ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուկյանի՝ 2017թ. սեպտեմբերի 18-20-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Աշոտ Մանուկյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) / 2017թ. սեպտեմբերի 18-20-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր համաժողովի 61-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Քննարկվել են նստաշրջանի օրակարգով նախատեսված հարցերը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպում է կայացել ԱԷՄԳ-ի գլխավոր տնօրեն Յուկիա Ամանոյի հետ: Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրենին ներկայացվել է հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման և արդիականացման ծրագրի ընթացքը: Կարևորվել է ԱԷՄԳ-ի դերը ՀԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացման գործում:

Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՀԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը շահագործումից հանելու ծրագրին և այդ գործընթացին ԱԷՄԳ-ի աջակցության տրամադրման հնարավորություններին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վիեննայում կայացած Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր համաժողովի 61-րդ նստաշրջանում սեպտեմբերի 21-ին Հայաստանն ընտրվել է ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի անդամ: Կառավարիչների խորհրդի անդամ են հանդիսանում ԱԷՄԳ 169 անդամ պետություններից 35-ը:

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության Կառավարիչների խորհուրդն ամենամյա գլխավոր համաժողովի հետ միասին հանդիսանում է ԱԷՄԳ քաղաքական երկու կառույցներից մեկը: Այն պատասխանատու է ԱԷՄԳ քաղաքականության մեծ մասի ձևավորման համար: Կառավարիչների խորհուրդը մշակում և հանձնարարականներ է տալիս գլխավոր համաժողովին ԱԷՄԳ գործունեության և բյուջեի վերաբերյալ, պատասխանատու է ԱԷՄԳ ստանդարտների հրապարակման համար, նշանակում է ԱԷՄԳ Գլխավոր տնօրենին՝ ներկայացնելով գլխավոր համաժողովի հաստատմանը:

Հայաստանի Հանրապետությունը Կառավարիչների խորհրդում պաշտոնավարելու է երկու տարի ժամկետով՝ սկսած 2017թ. սեպտեմբերի 25-ից:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքները Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ: